ՕՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ, ԴԵՍՊԱՆՆԵՐԻՑ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նախագահ,

Խոր վշտի զգացումով տեղեկացանք Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ծայրագույն Պատրիարք Վազգեն Առաջինի վախճանման մասին:

Ռուսաստանում Վազգեն Առաջինին գիտեին որպես ժողովուրդների միջև բարեկամության և համագործակցության գաղափարի անխոնջ ջատագովի, որը մեծ ավանդ է ներդրել Անդրկովկասում այդ գաղափարի գործնական իրականացման մեջ: Վազգեն Առաջինի վառ հիշատակը հավերժ կմնա ռուսաստանցիների սրտերում:

Ընդունեցեք, պարոն Նախագահ, անկեղծ ցավակցություն անդառնալի կորստյան կապակցությամբ: Խնդրում ենք նաև կարեկցանք ու ցավակցություն հաղորդել Հայաստանի ժողովրդին, Վազգեն Առաջինի հարազատներին և մտերիմներին:

ԲՈՐԻՍ ԵԼՑԻՆ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա, Կրեմլ, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նախագահ,

Խորապես տխրեցի՝ լսելով Ամենայն Հայոց Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Վազգեն Առաջինի մահվան լուրը: Հայոց պատմության մռայլ շատ ժամանակներում Հայ Եկեղեցին հույսի և միասնության փարոս է եղել ամբողջ աշխարհի հայության համար: Այդպես էր նաև վերջին 39 տարիներին, Նորին Սուրբ Օծություն Վազգեն Առաջինի կաթողիկոսության օրոք: Դրանք նշանակալի վերափոխումների տարիներ էին, երբ Հայաստանը Խորհրդային Միության տիրապետության տակ անցնում էր «սառը պատերազմի» խորհրդանշաններով, և որոնց բարձրակետը անկախ Հայաստանի վերածնունդը եղավ՝ ինքնիշխան ու ժողովրդավարական հանրապետություն դառնալու ավելի պայծառ ապագայի ակնկալիքներով: Նորին Սուրբ Օծություն Վազգեն Առաջինը հայ ժողովրդի համար ոգեշնչման անսպառ աղբյուր էր բոլոր այդ տասնամյակներին: Նրա մահը մեծ կորուստ է:

Խնդրում եմ Ամերիկայի ժողովրդի անունից ընդունել իմ խորին ցավակցությունները:

ԲԻԼ ՔԼԻՆԹՈՆ
ԱՄՆ-Ի ՆԱԽԱԳԱՀ

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Երևան, Հայաստան

Պարոն Նախագահ,

Ես խոր կսկիծով լսեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Վազգեն Առաջինի մահվան լուրը:

Ես գիտեմ, թե ձեր ժողովրդի համար ինչ մեծ կորուստ է այդ խաղաղասեր մարդու մահը, և խնդրում եմ Ֆրանսիայի և անձամբ իմ անունից ընդունել մեր անկեղծ ցավակցությունը:

Նորին Սրբության այցելությունները Ֆրանսիա տպավորիչ հիշողություններ են թողել և նպաստել մեր երկրի ժողովուրդների բացառիկ բարեկամական կապերի պահպանմանն ու զարգացմանը: Մենք բարձր ենք գնահատում Նորին Սրբություն Վազգեն Առաջինի՝ Ֆրանսիայի նկատմամբ տածած հարգանքը:

Թող նրա խաղաղասիրական գործունեությունը, ինչպես նաև հայերին միասնական տեսնելու ցանկությունը իրենց արժանի շարունակությունն ունենան:

Պարոն Նախագահ, ես Ձեզ խնդրում եմ ընդունել հարգանքներիս ջերմագին հավաստիքը:

ՖՐԱՆՍՈՒԱ ՄԻՏԵՐԱՆ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

Փարիզ

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Նախագահ,

Խորապես ցավակցում եմ հայ ժողովրդի կրած ծանր կորստի՝ Ծայրագույն Պատրիարք, Ամենայն Հայոց Կաթողիկոս, ռումին ժողովրդի մեծ բարեկամ Վազգեն Առաջինի մահվան առթիվ:

ԻՈՆ ԻԼԻԵՍԿՈՒ
ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Պարոն Նախագահ,

Ամբողջ Վրաստանը խոր վշտով ընդունեց համայն հայության հոգևոր հոր՝ Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա Կաթողիկոսի մահվան լուրը:

Նա իր ժողովրդի նվիրական իղձերի իրական արտահայտիչն էր, նրա պատվի, խղճի և բանականության մարմնավորողը: Նրա՝ Պատրիարքի կերպարանքն ու իմաստուն հայացքը կրում էին հայ ժողովրդի մեծ ու ողբերգական պատմության դրոշմը: Բայց արդիականության իմաստուն գործչի՝ Վազգեն Առաջինի հայացքը միաժամանակ հառած էր ապագային: Նա հավատում էր իր ժողովրդի վաղվա օրվան և օրհիբուն մաքառում հանուն այդ ապագայի: Հայաստանի պատմությունն ստեղծվել է հենց նման երախտավորների կողմից, որոնց նշանակությունը տարածվում է Հայաստանի սահմաններից դուրս:

Սգի ու վշտի այս օրերին ձեզ հետ միասին ամբողջ Վրաստանը խոնարհվում է Հայաստանի մեծ զավակի՝ Աստուծո նվիրյալ Վազգեն Առաջինի հիշատակի առաջ:

ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՁԵ
ՎՐԱՍՏԱՆԻ ԳԽ ՆԱԽԱԳԱՀ

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Երևան

Ձերդ Գերազանցություն,

Իմանալով Հայ Առաքելական Եկեղեցու Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մահվան լուրը, ցանկանում եմ հաղորդել Ձեզ իմ անունից, ինչպես նաև Ուրուգվայի կառավարության և ժողովրդի անունից խորագույն ցավակցություններ:

Ընդունեցեք, Ձերդ Գերազանցություն, իմ խորին հարգանքի արտահայտությունը:

ԼՈՒԻՍ ԱԼԲԵՐՏՈ ԼԱԿԱԼԼԵ ՀԵՐԵՐԱ
ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Մոնտեվիդեո, 20 օգոստոս 1994 թ.

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Խոր կսկիծով ընդունեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մահվան լուրը:

Հայաստանի ժողովրդի համար այս տխուր օրերին խնդրում եմ Միավորված Ազգերի Կազմակերպության անունից ընդունել անկեղծ համակրանքի ցավակցության այս ուղերձը:

Վազգեն Առաջինը երկար կմնա մարդկանց հիշողության մեջ բարեպաշտության, համեստության և իր երկրին խոր նվիրվածության համար: Մենք ողբում ենք Աստուծո մարդու և ականավոր հայի կորուստը: Մեզ կմխիթարի այն միտքը, որ նրա օրինակը, նրա հավատը կապրեն իրենից հետո: Այդ հիշողությունները ապագայում ներշնչման աղբյուր կլինեն շատերի համար:

Այդ ծանր կորստյան և վշտի պահերին մենք հոգով ձեզ հետ ենք:

ԲՈՒՏՐՈՍ ՂԱԼԻ
ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

* * *

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Էջմիածին, Հայաստան

Ընդունեցեք իմ անկեղծ ցավակցությունները Նորին Սրբություն Վազգեն Առաջինի մահվան առթիվ: Մեր հիշողության մեջ հավերժ կմնա նրա վճռական և հետևողական ջանքերը հայ ժողովրդին հավատք ու հույս ներշնչելու ծանր ժամանակներին: Մոտ չորս տասնամյակ նա մեծ եռանդով և հաստատությամբ կատարեց իր առաքելությունը որպես Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդ և իրեն նվիրեց խաղաղության և հաշտեցման գործին: Նրա գործունեությունը և շինարար դերը էկումենիկ հարցերում դրսևորվում էր նրա անշահախնդիր մոտեցմամբ և խորին նվիրվածությամբ քրիստոնեությանը վերաբերող գործերում:

Ավստրիայում մենք բարձր ենք գնահատում նրա գործունեությունը և սերտ գործակցությունը որպես «Պրո-Օրիենտեի» հովանավորի:

ԱԼՈՒՍ ՄՈԿ
ԱՎՍՏՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՖԵԴԵՐԱԼ ՆԱԽԱՐԱՐ

Վիեննա, 25 օգոստոս 1994 թ.

* * *

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Ս. Էջմիածին, Կաթողիկոսարան

Թույլ տվեք հայտնել Ձեզ իմ խորին վիշտը Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինի վախճանման առթիվ ի Սուրբ Էջմիածին:

Այս տխուր առիթով ես ցանկանում եմ իմ հարգանքը մատուցել այն բացառիկ անձնավորությանը, ինչպիսին եղավ Նորին Սրբությունը՝ երկար դարեր տառապած, բայց միշտ ինքնավստահ մի ժողովրդի լուսամիտ Առաջնորդը, երկխոսությամբ աշխարհին բացված Հովվապետը, էկումենիզմի ջատագով հոգևոր գործիչը:

Նրա օրինակը վստահաբար պիտի շարունակի առաջնորդել և հաստատուն պահել Հայ Առաքելական Եկեղեցին այն ճանապարհի վրա, որ նա բաց արեց:

Ինչ վերաբերում է ինձ, ես երբեք պիտի չմոռանամ այն մեծ պատիվը, որին նա արժանացրեց ինձ՝ շնորհելով Սուրբ Գրիգոր Լուսավորչի շքանշանը: Դա մի թանկագին կապ է, որ այսուհետև ինձ միացնում է ձեր Եկեղեցուն և ձեր ազգին:

Ընդունեցեք իմ խորին մեծարանքի և ջերմ ու անկեղծ բարեկամության հավաստիքը:

ԺԱԿ ՇԻՐԱԿ
ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Փարիզ, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Էջմիածին, Հայկական Վանք

Ձեզ հետ միասին խոր վիշտ ենք ապրում Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր առաջնորդ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Վազգեն Առաջինի մահվան առթիվ:

Մենք ճանաչում էինք նրան որպես բարի հոգևոր հովվապետի, որի սիրտը ցավում էր յուրաքանչյուր որբի և տառապյալ ու համբերող թշվառի համար: Նա խաղաղարար և բարեգործ մեծ մարդ էր, տարբեր ժողովուրդների և դավանանքների ներկայացուցիչների միջև արդար ու բարեկամական հարաբերությունների անկեղծ կողմնակից: Նրա հեղինակավոր ձայնը, խոր թաթափանց և իմաստուն մարդու ձայնը հնչում էր ամեն անգամ, երբ որևէ տեղ մոլորակի վրա անմեղ արյուն էր թափվում, երբ անհրաժեշտ էր լինում համոզել ընդդիմադիր ուժերին խաղաղության և բարեկամության ձեռք մեկնել իրար: Մենք նրան ճանաչում էինք իբրև Մոսկվայի և Ռուսաստանի մեծ

բարեկամի, որը շատ բան է արել մեր ժողովուրդների միջև եղբայրական հարաբերությունների զարգացման համար: Նա հայտնի էր իբրև եկեղեցական մեծ գիտնական, որի աստվածաբանական ժառանգությունը կապրի դարեր: Նա սիրում էր բարեկամություն անել մարդկանց հետ և սիրում էր նրանց:

Մենք երկար կպահենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մեծ մարդու և քաղաքացու հիշատակը: Թող հողը թեթև լինի նրա վրա:

ՅՈՒՐԻ ԼՈՒԺԿՈՎ
ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Մոսկվա, 22 օգոստոս 1994 թ.

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նախագահ,

Անձամբ իմ և Սանկտ Պետերբուրգի բնակիչների անունից թույլ տվեք մեր անկեղծ ցավակցությունը հայտնել Ձեզ և Հայաստանի բարեկամ ժողովրդին՝ Վազգեն Առաջին Կաթողիկոսի մահվան կապակցությամբ:

Այս ողբերգական պահին մենք ագում ենք ձեզ հետ միասին: Այդ սուրբ և առաքինի անձնավորությունն անգնահատելի ավանդ է ներդրել Կովկասում ծագած բարդ խնդիրների լուծման, ինչպես նաև Ռուսաստանի և Հայաստանի ժողովուրդների ավանդական բարեկամության ամրապնդման գործում: Նրա պայծառ հիշատակը հավերժ կմնա մեզ հետ:

ԱՆԱՏՈԼԻ ՍՈԲՉԱԿ
ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆԻՆ

Վեհարան, Ս. Էջմիածին

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջինի մահը խոր վիշտ պատճառեց ինձ և Երևանում Ամերիկյան դեսպանատան իմ գործընկերներին: Մեր բոլորի անունից Ձեզ և Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր հոգևորականներին ուզում եմ հայտնել մեր ցավակցությունն ու խորին հարգանքը նրա հիշատակին:

Այն արժանապատվությունն ու վեհությունը, որով Նորին Սրբությունը վարում էր իր ծանրագույն գործը շուրջ քառասուն տարի, կարող է ղեկավարման վառ օրինակ հանդիսանալ բոլորիս համար: Անձնապես ես զգացված եմ և խորապես տպավորված այն սրբազան հանգստությամբ, որով Վե-

հափառ Հայրապետը տանում էր իր երկարատև և հետզհետե ծանրացող հիվանդությունը:

Թող Տեր օրհնի Ձեզ և Հայ Առաքելական Եկեղեցու Ձեր բոլոր հոգևոր եղբայրներին Մայր Աթոռի համար այս դժվարին և պատմական օրերին:

Հարգանքներով՝

ՀԱՐՐԻ ԳԻՎՄՈՐ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆ

Երևան, 24 օգոստոս 1994 թ.

* * *

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Հայաստան

Գերագույն Խորհրդի սիրելի անդամներ,

Ի դիմաց Կանադայի Կառավարության կուզեի ձեզ հաղորդել իմ ցավակցությունները Նորին Սրբություն Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան առթիվ:

Մենք ագում ենք ձեզ հետ իր իմաստուն և կարեկցալի ղեկավարության կորուստը, որ այնքան անհրաժեշտ էր ամենուրեք գտնվող հայերի կյանքում:

Ձերդ անկեղծորեն՝

Ջ. Ք. Բ. ՔԻՆՍՄԵՆ
ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱԴԱՅԻ ԴԵՍՊԱՆ

7 սեպտեմբեր 1994 թ.

* * *

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԳՅՈՒՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԳԱՇՅԱՆԻՆ

Ս. Հովհաննես Մկրտիչ հայոց եկեղեցի, Փարիզ

Վալանս քաղաքի և նրա ողջ հայ համայնքի անունից խնդրում եմ ընդունել իմ ամենաանկեղծ ցավակցությունները Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինի վախճանման առթիվ: Հայտնում եմ Ձեզ իմ վշտագին զգացումների հավաստիքը:

ՌՈԴՈԼՖ ՊԵՍ
ՎԱԼԱՆՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Վալանս, 23 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Անհուն վշտով իմանալով Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինի մահվան գույժը, հոգևին մասնակցում եմ այսօր հայ ժողովրդին հարվածող սգին և բաժանում նրա հուզումը: Ողջունում եմ հիշատակը այն մեծահոգի անձնավորության, որի բարոյական հեղինակությունը և հոգու ճառագայթումը նպաստեցին երկար տարիներ պահպանելու աշխարհի առաջին քրիստոնեական Եկեղեցու վավերականությունը:

Այս առթիվ ցանկանում եմ արտահայտել հայ ժողովրդի հանդեպ ունեցած իմ համակրալից զգացումները՝ հղելով նրան իմ անկեղծ ցավակցությունները:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԲԼՈՒԱՆ
ԼՈՒԱՐԱՅԻ ՇՐՋԱՆԻ ԵՐԵՍՓՈԽԱՆ ԵՎ
ՖՐԱՆՍԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Սեն Շամոն, 24 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Մեծարգո անդամներ Հոգևոր Խորհրդի,

Ցավով իմացա Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինի վախճանման գույժը: Միանում եմ Հայ Առաքելական Եկեղեցու սգին և բաժանում հուզումն ու վիշտը Մարսելի շրջանի հայկական համայնքի, որին բազմաթիվ հովվապետական այցելություններ էր տվել Հայոց Հայրապետը:

Ես խոնարհվում և ողջունում եմ հիշատակը բարձրաստիճան մի եկեղեցականի, ազգային հերոսի պատվին արժանացած հայ ժողովրդի մեծ սպասավորի, որի ճառագայթող և հարգարժան անձնավորությունը պատմության զանազան վերիվայրումներով հատկանշված շուրջ քառասուն տարվի Իր Հայրապետական շրջանում կարողացավ պահպանել աշխարհի առաջին քրիստոնեական Եկեղեցու վավերականությունը:

Լինելով խաղաղության և եղբայրության մարդ ու մեծ շինարար, ունենալով մարդասիրական և էկումենիկ ոգի՝ նա ամրացրեց Հայ Եկեղեցու ազգային նկարագիրը և Հայաստանի պատկերը համայն աշխարհում:

Անձամբ իմ անունից և Բուշ-Դյու-Ռոնի դեպարտամենտի Գլխավոր Խորհրդի անունից ներկայացնում եմ ձեզ, մեծարգո անդամներ, իմ ամենաանկեղծ ցավակցությունները:

ԼՅՈՒՍԻԵՆ ՎԵՅԳԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մարսել, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ ինձ այլևս վիճակված չի լինի Սուրբ Էջմիածնում տեսնելու մեր դարաշրջանի ամենաիմաստուն մարդկանցից մեկին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին: Այդ հիրավի բիբլիական մարդու հետ ամեն մի հանդիպում բազմապատկում էր հոգուս կորովը, ուժ տալիս պայքարելու բոլոր նրանց դեմ, ովքեր, ի խախտումն մարդու իրավունքների, ղարաբաղցուն զրկում են իր հողում ապրելու, մայրենի լեզվով խոսելու, իր Աստծուն հավատալու հնարավորությունից:

Ես լավ գիտեմ, որ Վազգեն Առաջինը շատ բան է արել, որ Ղարաբաղի երկնքում ողողանջեն հայկական տաճարների զանգերի աստվածային հընչյունները: Կարծում եմ նրա համար լավագույն հուշարձանը կլինի վերածնված կյանքը Ղարաբաղի ազատ հողի վրա:

ԲԱՐՈՆՈՒՀԻ ՔԵՐՈՂԱՅՆ ՔՈՔՍ
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՓՈԽԽՈՍՆԱԿ

ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՑ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԾՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Էջմիածին, Հայաստան

Նորին Սրբություն Պապ Ծենուդա Գ-ն և Ղպտական Ուղղափառ Եկեղեցու արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները իրենց անկեղծ ցավակցությունն են հայտնում Հայ Առաքելական Եկեղեցու Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինի մահվան կապակցությամբ: Մենք խորին երախտագիտությամբ հիշում ենք, թե նա ինչպիսի հմտությամբ էր ղեկավարում Հայ Առաքելական Եկեղեցին 1955 թվականից սկսած: Նա մարմնավորեց իր մեջ հայերի ազգային ինքնությունը և համաշխարհային առաջին պատերազմից հետո աշխարհով մեկ սփռված հայերի համար Հայ Եկեղեցին դարձրեց ազգային ինքնության խորհրդանիշ և հոգևոր կյանքի աղբյուր՝ հատկապես Սովետական Հայաստանում իշխող պաշտոնական աթեիզմի ժամանակաշրջանում·